

ներք սիրեցին Երուսաղեմի եւ Պաղեսիմի: Այս տղերք գրուած են Յովնաննէս Գաբելեան կաթողիկոսի մահուանէն վերջ, եւ այս յայտնի է կաթողիկոսին համար *երանեղի* բառին գործածութենէն: Յուցակագիր Անաստաս վանական կը դնէ այս պատմական ծանօթութիւնները՝ որոնք իրմէ առաջ պատահած էին, եւ կը ծանօթագրէ նաեւ ցուցակագրութենէն քիչ վերջ տեղի ունեցած դէպքերը, որոնք մեծապէս վնասեցին հայկական վանքերու գոյութեան եւ շատ քիչեր մնացին անվնաս: Կը դասաւորենք հոս նոյն պատճառները .

Ա. Քաղկեդոնական խնորոյն պատճառաւ Երուսաղեմի պատրիարքներուն գրառումներն, ինչպէս վերեւ յիշեցիմք:

Բ. Հայոց կաթողիկոսներուն եւ իշխաններուն աննորոքեան եւ վանականաց ծառայեան պատճառաւ տեղի ունեցած փակումները:

Գ. Մեր շատ մը վանքերուն մեջ երբ առաջնորդները կը վախճանէին եւ չկար հոգաբարձու մը որ առաջնորդ նշանակէր վախճանողին տեղ, այդ պատճառաւ Երուսաղեմի պատրիարքները անմիջապէս կը գործադրէին զայն:

Դ. Իպրաններուն պահանջած հարկերուն ծանրութենէն ազատեալու համար հայ վանականները իրենց վանքերէն դուրս ելան . քաղաքին պարիսպին մօտ իրենց ունեցած վանքերը կանանց վանքերու վերածեցին եւ սարկաւազուհիներ կարգեցին, որպէս զի հարկ չլճարէն եւ ազատ ըլլան, ինչպէս միւս կանանց վանքերը:

Ե. Հայ վանականները իրենք քաղաքէն դուրս ելան եւ ուրիշ տեղեր գնացին, եւ վանքերու անունները փոխեցին ու անուանեցին նախարարներու եւ ազատներու անունով, քերեւս անունովի կարեւան օգնութիւն եւ ողորմութիւն զնկել:

Զ. Իպրան տիրապետութեան սկզբնաւորութեան քեւ հայ վանականները հանգստացան, վասն զի պատրիարքները այդչաւ մէկը չէին կրնար բռնադատել, բայց դժբախտաբար Հայոց երկրին անեղանց պատճառներով շատ նեղուեցան, վասն զի հայ բազաւորներուն եւ իշխաններուն վանքերուն պարզեւած գիւղերը եւ ազատակները այդչաւ եկամուտ չէին բերեր, եւ վանականները չկրնալով հաւքերել՝ բողոքցին իրենց վանքերը, եւ «Օ.Ե. վանք միայն մնացին», ու ցրուեցան մեծակայ տեղերը:

Վանօրէից Յուցակին մէջ բովանդակուած վանքերու անուններէն յայտնի է քէ Հայոց նախարարական տուններէն շինուած եւ հոգացուած